

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն հ. 28

ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի
խորհրդի 17.02.2011թ. նիստի

խորհրդի 31 անդամներից ներկա էին 26-ը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. Ձմեռային քննաշրջանի ամփոփում:
2. Մեխանիկայի ամբիոնի պրոֆեսոր, ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր Ա.Ս.Ավետիսյանին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու երաշխավորության հարցը:
3. Դիֆերենցիալ հավասարումների ամբիոնի ասիստենտ, ֆիզ.մաթ.գիտ.թեկնածու Յայկ Ասատրյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորության հարցը:
4. 2010-11 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում ֆակուլտետի ուսանողներին անվանական կրթաթոշակի ներկայացման հարցը:
5. Թեկնածուական միմիումի մասնագիտական քննության հարցաշարի հաստատման հարցը:
6. Ակադեմիկոս Ա.Ն.Մերգեյանի կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի սրահում տեղադրելու հարցը:
7. Գ.Վ.Միքայելյանի և Ջ.Ս.Միքայելյանի «Մաթեմատիկական մեթոդներ բնագիտության մեջ» ուսումնական ձեռնարկի հրատարակման ներկայացնելու հարցը:

1. **Լսեցին** – Ձմեռային քննաշրջանի ամփոփման հարցը:

Ֆակուլտետի դեկանի տեղակալ Ա.Թասլաքյանը ներկայացրեց քննաշրջանի արդյունքներն ըստ մասնագիտությունների և ըստ կուրսերի: Նշվեց բակալավրիատում ցածր առաջադիմությունը: Խորհուրդը ի գիտություն ընդունեց Ա.Թասլաքյանի զեկույցը և առաջարկելով դասախոսներին նոր մոտեցումներ ու առաջարկներ տալ ուսումնառության մակարդակը բարձրացնելու համար, **որոշեց** արդյունավետ աշխատանքներ տանել առաջադիմությունը բարձրացնելու համար, հատկապես կուրատորների աշխատանքը դարձնել արդյունավետ:

2. Լսեցին - Մեխանիկայի ամբիոնի պրոֆեսոր, ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր Ա.Ս.Ավետիսյանին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու երաշխավորության հարցը:

Գիտքարտուղարը ներկայացրեց մեխանիկայի ամբիոնի կարծիքը՝ ամբիոնի նիստի արձանագրությունից քաղվածքի տեսքով, ըստ որի Ա.Ս.Ավետիսյանը երաշխավորվում է պրոֆեսորի կոչում ստանալու համար:

Ներկայացվեց մրցութային հանձնաժողովի եզրակացությունը այն մասին, որ ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր Ա.Ս.Ավետիսյանի կողմից ներկայացված փաստաթղթերը լիովին բավարարում են պահանջվող պայմաններին և նա երաշխավորվում է պրոֆեսորի գիտական կոչում ստանալու համար: Խորհուրդը բաց քվեարկությամբ որոշեց Ա.Ս.Ավետիսյանի թեկնածությունը դնել փակ (գաղտնի) քվեարկության: Հաստատվեց հաշվիչ հանձնաժողովը հետևյալ կազմով՝ Գ.Միքայելյան (նախագահ), Վ.Մարտիրոսյան, Յու.Սովսիսյան: Քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահը ներկայացրեց արդյունքները, ըստ որի՝ Ա.Ս.Ավետիսյանի թեկնածությանը կողմ են քվեարկել 26-ը, դեմ չկա, անվավեր քվեաթերթ չկա: Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքով Ա.Ս.Ավետիսյանը երաշխավորվում է պրոֆեսորի գիտական կոչում ստանալու համար:

Խորհուրդը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը և

Որոշեց - երաշխավորել մեխանիկայի ամբիոնի պրոֆեսոր, ֆիզ.մաթ. գիտ. դոկտոր Արա Սերգեյի Ավետիսյանին պրոֆեսորի գիտական կոչում ստանալու համար:

3. Լսեցին - Դիֆերենցիալ հավասարումների ամբիոնի ասիստենտ,

ֆիզ.մաթ.գիտ.թեկնածու Հայկ Ասատրյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու երաշխավորության հարցը:

Գիտքարտուղարը ներկայացրեց դիֆերենցիալ հավասարումների ամբիոնի կարծիքը՝ ամբիոնի նիստի արձանագրությունից քաղվածքի տեսքով, ըստ որի Հ.Ա.Ասատրյանը երաշխավորվում է դոցենտի կոչում ստանալու համար:

Ներկայացվեց մրցութային հանձնաժողովի եզրակացությունը այն մասին, որ ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու Հայկ Ալբերտի Ասատրյանի կողմից ներկայացված փաստաթղթերը լիովին բավարարում են պահանջվող

պայմաններին և նա երաշխավորվում է դոցենտի գիտական կոչում ստանալու համար:

Խորհուրդը բաց քվեարկությամբ որոշեց Յ.Ա.Ասատրյանի

թեկնածությունը դնել փակ (զաղտնի) քվեարկության: Հաստատվեց հաշվիչ հանձնաժողովը հետևյալ կազմով՝ Գ.Միքայելյան (նախագահ),

Վ.Սարտիրոսյան, Յու.Մովսիսյան: Քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահը ներկայացրեց արդյունքները, ըստ որի՝

Յ.Ա.Ասատրյանի թեկնածությանը կողմ են քվեարկել 26-ը, դեմ չկա,

անվավեր քվեաթերթ չկա: Փակ (զաղտնի) քվեարկության արդյունքով

Յ.Ա.Ասատրյանը երաշխավորվում է դոցենտի գիտական կոչում

ստանալու համար:

Խորհուրդը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը և

Որոշեց - երաշխավորել դիֆերենցիալ հավասարումների ամբիոնի ասիստենտ,

Ֆիզ.մաթ. գիտ. թեկնածու Հայկ Ալբերտի Ասատրյանին դոցենտի գիտական

կոչում ստանալու համար:

4. Լսեցին - 2010-11 ուսումնական տարվա ֆակուլտետի ուսանողներին անվանական

կրթաթոշակի ներկայացման հարցը:

Հարցը ներկայացրեց դեկան Ա.Ա.Սահակյանը:

Որոշեցին - Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի հետևյալ ուսանողներին

ներկայացնել անվանական կրթաթոշակի.

1. Ակադեմիկոս Արտաշես Շահինյանի անվ. կրթաթոշակ

Մանվելյան Աստղիկ Գագիկի- ակտուար մաթեմատիկա 4-րդ կուրս

2. Ակադեմիկոս Մխիթար Ջրբաշյանի անվ. կրթաթոշակ

Բեկնազարյան Ալեքսանդր Ֆելիքսի-մաթեմատիկա, մագիստրատուրա

1-ին կուրս

3. Ակադեմիկոս Նագուշ Հարությունյանի անվ. կրթաթոշակ

Շախբազյան Գեղամ Արտավազի- մեխանիկա, մագիստրատուրա 1-

ին կուրս

5. Լսեցին - Թեկնածուական միջինումի մասնագիտական քննության հարցաշարի

հաստատման հարցը:

Հավանականությունների տեսության և մաթեմատիկական

վիճակագրության ամբիոնի վարիչ Է.Դանիելյանը ներկայացրեց

«Ստոխաստիկ և ինտեգրալ երկրաչափություն» թեկնածուական միմիմունի քննության հարցաշարը:

Որոշեցին – Հաստատել «Ստոխաստիկ և ինտեգրալ երկրաչափություն» թեկնածուական միմիմունի քննության հարցաշարը:

6. Լսեցին – Ակադեմիկոս Ս.Ն.Մերգեյանի կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի սրահում տեղադրելու հարցը:

Խորհրդի անդամները՝ Յու. Մովսիսյանը, Վ.Սարտիրոսյանը, Է.Դանիելյանը, Մ.Կարախանյանը իրենց ելույթներում հիմնավորեցին ակադեմիկոս Ս.Ն.Մերգեյանի կիսանդրին ԵՊՀ շքասրահում տեղադրելու անհրաժեշտությունը: Դեկան Ա.Ա.Սահակյանն իր ելույթում նշեց բարձրացված հարցի կարևորությունը Երևանի պետական համալսարանի պատմության ներկայացման տեսանկյունից:

Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի խորհուրդը նկատի ունենալով աշխարհահռչակ մաթեմատիկոս, ակադեմիկոս Ս.Ն.Մերգեյանի մեծ ավանդը մաթեմատիկայի, հաշվողական տեխնիկայի և կիրառական մաթեմատիկայի զարգացման գործում, նրա ստացած հիմնարար արդյունքները ժամանակակից մաթեմատիկայի մի շարք բնագավառներում, նշելով ԽՍՀՄ ԳԱ թղթ. անդամ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս.Ն.Մերգեյանի մեծ վաստակը համալսարանական կրթության և մաթեմատիկայի հայկական դպրոցի միջազգային ճանաչման գործում, հաշվի առնելով, որ նա երկար ժամանակ եղել է ՀՀ ԳԱԱ և ԵՊՀ միացյալ հաշվողական կենտրոնի տնօրեն և ԵՊՀ թվային անալիզի ամբիոնի վարիչ

Որոշեց - Դիմել ԵՊՀ գիտական խորհրդին առաջարկելով տեղադրել ակադեմիկոս մաթեմատիկոս, ակադեմիկոս Սերգեյ Նիկիտայի Մերգեյանի կիսանդրին ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի սրահում:

7. Լսեցին - Գ.Վ.Միքայելյանի և Զ.Ս.Միքայելյանի «Մաթեմատիկական մեթոդներ բնագիտության մեջ» ուսումնական ձեռնարկը հրատարակման ներկայացնելու հարցը:

Ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Ս.Աթաբեկյանը ներկայացրեց ֆակուլտետի մեթոդական խորհրդի որոշումը, համաձայն որի խորհուրդը միաձայն երաշխավորել է ուսումնական ձեռնարկը հրատարակման ներկայացնելու համար:

Ելույթ ունեցան ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Ա.Ա.Սահակյանը,
ֆիզ.մաթ.գիտ. թեկնածու, դոցենտ Ա.Կ.Թասլաքյանը, ֆիզ.մաթ.գիտ.
թեկնածու, դոցենտ Գ.Ս.Հակոբյանը: Նրանք նշեցին ուսումնական
ձեռնարկի կարևորությունը ուսումնական գործընթացում, հատկապես
քիմիա, կենսաբանություն, էկոլոգիա, աշխարհագրություն և
երկրաբանություն մասնագիտություններով ուսումնառության ընթացքում:

Որոշեցին - Գ.Վ.Միքայելյանի և Զ.Ս.Միքայելյանի «Մաթեմատիկական մեթոդներ
բնագիտության մեջ» ուսումնական ձեռնարկը ներկայացնել
հրատարակման:

Խորհրդի նախագահ

Ա.Ա.Սահակյան

Գիտքարտուղար

Ս.Հ.Զիլավյան